Արձանագրություն N 4

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«18» «դեկտեմբերի» 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ.Գաբրելյան
Բացակայում էին՝

1. «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի և 20-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց. N 1 չափաբաժնի մասով ընտված մասնակից ճանաչել **«Ֆարմ Թրաստ» ՍՊ** ընկերությանը:

1.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- **«Եվրոֆարմ» ՍՊ** ընկերության հայտում բացակայում է նմանատիպ փորձառություն ունենալու հիմնավորումը, ինչպես նաև կցված է հրավերի պահանջներին չհամապատասխանող Հավելված 2,
- **«Նատալի Ֆարմ» ՍՊ** ընկերությունը հայտի N 3 և 4 չափաբաժիններում ապրանքի անվանման փոխարեն նշված է ապրանքային նշանը, ինչպես նաև բացակայում է տեղեկատվությունը ապրանքի չօգտագործված լինելու և գործարանային փաթեթավորման վերաբերյալ,
- **«Ջի Թի Սի» ՍՊ** ընկերության հայտում բացակայում է նմանատիպ փորձառություն ունենալու հիմնավորումը, ինչպես նաև թերի է տեխնիկական բնութագիրը՝ բացակայում է տեղեկատվությունը ապրանքի չօգտագործված լինելու, գործարանային փաթեթավորման, պիտանելիության ժամկետի վերաբերյալ,
- **«Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊ** ընկերության ընկերությունը հայտում բացակայում է նմանատիպ փորձառություն ունենալու հիմնավորումը,
- **«Թեոֆարմա» ՍՊ** ընկերության հայտում բացակայում է նմանատիպ փորձառություն ունենալու հիմնավորումը,
- **«Դելտա» ՍՊ** ընկերության հայտում բացակայում է նմանատիպ փորձառություն ունենալու հիմնավորումը, ինչպես նաև կցված է հրավերի պահանջներին չհամապատասխանող Հավելված 2,
- **«Արֆարմացիա» ՍՊ** ընկերության հայտում բացակայում է նմանատիպ փորձառություն ունենալու հիմնավորումը, ինչպես նաև թերի է տեխնիկական բնութագիրը՝ հստակ չէ տեղեկատվությունը դեղատուրացված էթանոլի պարունակության վերաբերյալ:

1.3 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրվա

ընթացքում տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն ընձեռել «Եվրոֆարմ» ՍՊ, «Նատալի Ֆարմ» ՍՊ, «Ջի Թի Սի» ՍՊ, «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊ, «Թեոֆարմա» ՍՊ, «Դելտա» ՍՊ և «Արֆարմացիա» ՍՊ ընկերություններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Պայմանագիր կնքելու որոշման մասին**

Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով՝ անգործության ժամկետից հետո N 1 չափաբաժնի մասով գնման պայմանագիր կնքել «Ֆարմ Թրաստ» ՍՊ ընկերության հետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները**

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա.Հակոբյան

Անդամներ՝ _____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Պ.Գաբրելյան